ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգաժան մարզպետ

Կից ներկայացնում եմ <<Հայկասարի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի համար մրցույթի հայտարարության տեքստը և քաղվածք կառավարման խորհրդի 31.05.2019 թվականի թիվ 23 նիստից:

Առդիր 2/երկու/ էջ:

ՀՀ Շիրակի մարզի

<< Հայկասարի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի նախագահ՝ Ս. Ոսկանյան

03.06.2019թ.

ՀՐԱՆՏ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 09019-15
03 06 19թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի մայիսի 31 թիվ 23 նիստի արձանագրությունից

Նիստին մասնակցում էին խորհրդի ութ անդամներից վեցը, բացակա՝ Վարդան Կոստանյան, Էմիլ Պետրոսյան

Օրակարգում՝

1. ՀՀ Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:/Զեկուցող `խորհրդի նախագահ Ս.Ոսկանյան/

Զեկուցողը նշեց,որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթով՝ ՀՀ Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2019թ. հունիսի 19-ից մինչև 2019 թ հուլիսի 18-ը հայտարարել մրցույթ:

2.Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:

3.Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության կառավարման պետական լիազորված մարմնին:

4.Մրցույթ հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակել ԶԼՄ-ներում և azdarar.am կայքում /14.06.2019թ. առաջին, 19.06.2019թ. երկրորդ/:

5.Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի հուլիսի 29-ին ժամը 12^{00}-ին:

6.Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի քարտուղար Ա.Մադոյանի վրա:

Մրցույթին մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի Հայկասարի հիմնական դպրոցում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 19.06.2019թ. մինչև 18.07.2019թ. ընկած ժամանակահատվածում՝ ժամը 10^{00}- 15^{00}:

Որոշումն ընդունվեց միաձայն՝ կողմ-6,դեմ-0

ՀՀ Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց»
ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝ Ս.Ոսկանյան

03.06.2019թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,

2) բարձրագույն կրթությունը,

3) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիր/:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,

3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,

4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ/,

5) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը /դրանց առկայության դեպքում/,

6) Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները համեմատվում են բնօրինակների հետ, իսկ բնօրինակները վերադարձվում են հավակնորդին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է փաստաթղթերը ներկայացնել Հայկասարի հիմնական դպրոցի կառավարման խորհրդին:

Փաստաթղթերն ընդունվում են Հայկասարի հիմնական դպրոցում՝ 19.06.2019թ.-ից մինչև 18.07.2019թ.-ը ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2019թ. հուլիսի 29-ին, ժամը 12:00-ին՝ Հայկասարի հիմնական դպրոցում:

Մանրամասների հետ ծանոթանալ ՀՀ Շիրակի մարզի Հայկասարի հիմնական դպրոցում /հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ գ, Հայկասար 1-ին փողոց շենք 18:

հեռ. /098 89-55-55/

ՀՀ Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց»
ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝ Ս.Ոսկանյան